

# Ա Պ Ր Ե Ն Ք Մ Ե Կ Ն Պ Ա Տ Ա Կ Ո Վ

Սկսվեց նոր տարվա աշխատանքային առաջին օրը:

«Ի՞նչ խոհերով, ծրագրերով դուք ներկայացաք ձեր աշխատատեղը, ի՞նչ բարեմաղթանքներ ունեք մեր ժողովրդին, հանրապետության կոմունիստներին» — այս հարցերով երեկ մեր թղթակիցը դիմեց Հայաստանի կոմկուսի Կենտկոմի բյուրոյի անդամության թեկնածու, ՀԿԿ Կենտկոմի կազմակերպական-կուսակցական աշխատանքի բաժնի վարիչ Ռուբեն Յակովի Հակոբյանին:

Անցած 1988 թվականը հայ ժողովրդի պատմության մեջ կգրվի իբրև մեծ արհավիրքի, ծանր ապրումների ու տառապանքների տարի: Այո, մենք անսահման վիշտ ու ողբ ապրեցինք, որի հետևանքները դեռ երկար զգացնել կտան: Սակայն, ինչպես ասում են, կյանքը կանգ չի առնում և հանուն մեր նահատակների, հանուն ավերակներից բարձրացող նոր Լենինականի, Կիրովականի, Սպիտակի, Ախուրյանի, Ստեփանավանի, մենք պետք է ավելի համախմբվենք, ավելի գոտեպնդվենք, ավելի ջերմանանք, ավելի նպատակային գործենք: Մենք պետք է ապրենք:

Ահա այս տխուր նախաբանով, քայք հավատի ու հույսի խոսքերով, վաղվա լավատեսությամբ, մեր ժողովրդի կամքին ու արիությանն ապավինելով ուզում եմ շնորհավորել բոլորին նոր տարվա առթիվ, ցանկանալ առողջություն, վերքերի ապաքինում, հույս և հա-

վատ և, ինչ խոսք, նաև արիություն:

Մենք այսպես մտածելու և այսպես ապրելու իրավունքն ունենք: Մեզնից յուրաքանչյուրը տարերային աղետի այս ծանր օրերին մեկ անգամ ևս զգաց սովետական ժողովուրդների ինտերնացիոնալ համախմբվածության մեծ ուժը, բոլոր ազգերի ու ազգությունների մարդկանց սրտացավ, անշահախնդիր վերաբերմունքը, կոմունիստական կուսակցության և սովետական պետության, նրա ղեկավարների անսահման հոգատարությունը: Անցած մի քանի օրվա ընթացքում Հայաստանի օրինակով ապացուցվեց ՄԱԿ-ի նըստաշրջանում հենց աղետի օրը Մ. Ս. Գորբաչովի արտահայտած այն միտքը, որ երկրագունդը մեր բոլորիս տունն է և մենք պետք է աչքի լույսի պես պահպանենք այն:

Փլատակներից հազարավոր մարդկանց կյանքի փրկարար գործին, ավերածությունների մաքրման աշխատանքներին

մասնակցելու համար աղետի հենց առաջին օրվանից մեր ժողովրդի կողքին կանգնեցին ու նրա հետ օր ու գիշեր պայքարի էլան, իրենց անմիջական և հեռակա օգնությունը հասցրեցին ուսը, վրացին, ուկրաինացին, բելոռուսը, ուզբեկը, լիտվացին, մեր անծայրածիր երկրի բոլոր ազգերի ու ազգությունների ուստրերն ու դուստրերը:

Մենք չենք կարող այսօր մեր երախտիքի խոսքը չասել տարբեր մայրցամաքների, մարքեր ռասաների ու տարբեր դավանանքի պատկանող ժողովուրդներին, որոնք անմնացորդ նվիրումով նաև իրենցն են համարում մեր ցավը:

Այս օրերին սփյուռքի մեր շատ հայրենակիցներ ոչ միայն ողբացին իրենց հարազատների վիշտը, այլև գործնական քայլերով ապացուցեցին իրենց նվիրվածությունը հայրենիքին՝ Սովետական Հայաստանին:

Ահա այսպես, աշխարհի բոլոր մարդկանց սրտացավ վերաբերմունքով է, որ սփոփվում է մեր հոգին, զգում ենք, որ այս համերաշխությամբ ու օգնությամբ նաև փյունիկի նըման մոխիրներից կհառնեն մեր նոր քաղաքներն ու գյուղերը:

Ընթերցողները լավատեղյակ են այն հսկայածավալ աշ-

խատանքներին, որ կատարվում է ՍՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոյի հանձնաժողովի կողմից տարերային աղետի հետևանքները վերացնելու ուղղությամբ: Այսօր էլ հանձնաժողովն ամենայն լարվածությամբ, ուշադրությամբ, խիստ ծանրաբեռնվածությամբ է աշխատում: Հանրապետությունում գտնվող հանձնաժողովի անդամները, ինչպես նաև հանրապետության ղեկավարությունն օրական մի քանի անգամ կապվում են ընկ. Ն. Ի. Ռիժկովի հետ: Կատարվող ողջ աշխատանքները զըտնըվում են ընկ. Մ. Ս. Գորբաչովի ամենօրյա ուշադրության և հսկողության ներքո:

Ամեն օր մենք հարյուրավոր հեռախոսազանգեր ենք ստանում, գալիս են պատվիրակություններ եղբայրական հանրապետություններից: Տեղերում ստեղծված համապատասխան հանձնաժողովները, ղեկավարները շթույացող թափով աշխատանքներ են տանում շինանյութերի, պարենամթերքի, հագուստի ու շարժական կացարանների ուղարկման, վերականգնման համար իրենց հատկացված տեղամասերի նախագծման, շինարարության համար շինհրապա-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

# Ա Պ Ր Ե Ն Ք Մ Ե Կ Ն Պ Ա Տ Ա Կ Ո Վ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

րակների նախապատրաստման ուղղությամբ:

Այս ամենը խոսում է նաև հանրապետության ղեկավար կազմակերպությունների աշխատանքի ծանրաբեռնվածության, խիստ լարվածության մասին: Ինքնաքննադատաբար պետք է ասել, որ ստեղծված ոչ կայուն իրավիճակը, դեպքերի ու երևույթների ամենօրյա, երբեմն ամեն ժամվա փոփոխությունները, մինչ այդ աշխատանքում չհանդիպած իրադրությունները հաճախ պատճառ են դառնում հարցերի ոչ օպերատիվ լուծման, պատահում են քաշքշուկի, անկազմակերպվածության դեպքեր, որոնք, իրավացի, առաջ են բերում մեր աշխատավորների վրդովմունքը:

Ինչ խոսք, արվում է հնարավորը նման երևույթների կանխման ուղղությամբ և պետք է ասել, որ դրանց թիվը օր օրի նվազում է, աշխատանքներն ավելի կազմակերպված, ավելի կոորդինացված են դառնում:

Ասվածի հետ մեկտեղ կըցանկանալի իմ մի քանի նըկատողությունները կիսել ընթերցողների հետ: Խոսքս հանրապետությունում վերջին ամիսներին ստեղծված բարոյաքաղաքական մթնոլորտի և որոշ անպատասխանատու, մըտածողության և գործելակերպի մեջ ծայրահեղության հասած մարդկանց վարքագծի մասին է:

Նախ դարաքաղյան պրոբլեմի և հանրապետության ղեկավարության դիրքորոշման մասին:

Գաղտնիք չէ, որ հանրապետության նոր ղեկավարությունը իր գործունեության հենց առաջին օրվանից տեսավ և փորձեց քարձրացնել դարաքաղյան հարցը հենց այն ձևով՝ ինչպիսին այն կա: Մենք

հիշենք հանրապետության Գերագույն սովետի հունիսյան նստաշրջանի որոշումը, հիշենք Հայաստանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար ընկ. Ս. Գ. Հարությունյանի ելույթները հայկական հեռուստատեսությամբ, կուսակցության համամիութենական XIX կոնֆերանսում, հիշենք մեր հանրապետության պատվիրակության դիրքորոշումը և հենց ընկեր Հարությունյանի ելույթը ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նիստում անցած տարվա հուլիսին: Սրանք միայն շտրիխներ են, որ վկայում են այս հարցի ուղղությամբ հանրապետության ղեկավարության դիրքորոշումը:

Պետք է նշել, որ պրոբլեմն իր ամբողջությամբ պարզ է նաև Միության ղեկավարներին:

Մ. Ս. Գորբաչովը կենտրոնական հեռուստատեսության և Հայաստանի հեռուստատեսության թղթակիցների հետ հարցազրույցի ժամանակ պարզորոշ ասաց. «Ղարաբաղի պրոբլեմը որպես այդպիսին կա, նա արմատներ ունի, և նա սրվեց այն պատճառով, որ նրա քնակչության նկատմամբ ինչ-որ փուլում ադրբեջանական նախկին ղեկավարությունը վերաբերվել էր սըխալ, ոչ լեցնիչյան ավանդույթների ոգով, իսկ երբեմն էլ ոչ մարդկայնորեն: Եվ դա վիրավորել էր մարդկանց: Սա մենք դատապարտում ենք: Նշանակում է կա այդ պրոբլեմը»:

Այսքանից հետո հարց է ծագում: Ի՞նչ նպատակ է հետապնդում «Ղարաբաղ» կոմիտեի անդամների հատկապես վերջին ժամանակաշրջանի գործունեությունը: Հակադրել ժողովրդին ղեկավարության հե՛տ: Ի՞նչ նպատակով, չէ որ ժողովրդի և ղեկավարության դիրքորոշումը նույնն է:

Անկեղծությունը պահանջում է ասել, որ կոմիտեի այսպես ասած «լիդերները» միանգամայն այլ նպատակներ հետապնդեցին: Ավելի պարզ, օգտվելով միտինգային լսարանում ձեռք բերած վստահությունից, նրանք այն ի սպաս դրեցին իրենց կարիերիստական ձգտումներն իրականացնելու համար միայն:

Ես չեմ ուզում կրկնել մեր ժողովրդի համար այս ծանր աղետի հենց առաջին օրերին երեխաներին այլ հանրապետություններ տանելու մասին նենգատիոխված լուրերը: Մի՞թե մեր ժողովուրդն այդպիսին է, մի՞թե մենք կարող ենք երես թեքել մեզ պարզած եղբայրական ձեռքից: Մի՞թե օգնության պատրաստ հազարավոր մարդկանց անկեղծ զգացմունքները որոշ անխոհեմ մարդկանց կողմից շրջելը, այլ աստառ հազցնելը՝ իրադրությունն ապակայունացնելու նըպատակ չի հետապնդում: Եվ այդ ամենն արդյոք տազնապ չի՞ հարուցում առանց այն էլ հուսահատված և վշտի մեջ գտնվող մարդկանց սրտերում:

Երբ այս օրերին կոչ է արվում լինել զգոն, համբերատար ու կարգապահ, կոմիտեական Հ. Գալստյանը հանդես է գալիս կարգուկանոնին չենթարկվելու լոզունգներով: Կամ ինչ նպատակ էր հետապնդում Ա. Մանուչարյանը, որը քղապեց. «Մենք կստիպենք մեզ վրա կրակելու»: Երևի Մանուչարյանը ուզում էր նո՞ր զոհեր: Չէ որ դրանք առանց այն էլ շատ են:

Վերջապես ինչի՞ վրա են հույս դնում նրանք, ովքեր այսօր դիպչում են ժողովրդի ծանրացած ու տառապած հոգուն, ովքեր սկսեցին ստահող լուրեր տարածել, թե իբր բանակը միջուկային ումբ է պայթեցրել Լենինականի տակ, որպեսզի հայ ժողովրդին շեղի դարաքաղյան շարժումից, մո-

ռանալով, որ երկրաշարժի պատճառով մեծ քանակության զոհեր են ունեցել նաև զինվորականների ընտանիքները: Եվ սրբապղծելով իրականությունը՝ «Ղարաբաղ» կոմիտեի լիդերները Սումգայիթի ողբերգության կազմակերպման մեջ անամոթաբար «Մոսկվայի ձեռքն» են տեսնում:

Իսկ ի՞նչը հատկապես վերջին օրերին նրանց մղեց այսպիսի ծայրահեղության:

Պատասխանը մեկն է: Երկրաշարժը շեղեց մարդկանց ուշադրությունը ոչ թե դարաքաղյան պրոբլեմից, այլ նըրանցից՝ «Ղարաբաղ» կոմիտեի լիդերներից: Մարդիկ իրենց հույսը և հավատը տեսան երկրի, հանրապետության ղեկավար կազմակերպությունների գործունեության մեջ, համախմբվեցին մեկ մարդու պես օգնության հասնելու աղետի վայրերը, տրամադրվեց ողջ տեխնիկան, միջոցները: Եվ այս ֆոնի վրա կոմիտեականները փորձեցին պատեպատ տալ իրենց, թե իբր իրենք են կազմակերպում և ղեկավարում աղետի հետեվանքների վերացումը: Իսկ երբ զգացին, որ քան դուրս չի գալիս, որ ժողովուրդը լավ է հասկանում, ով՞ ով է, դիմեցին ծայրահեղ միջոցների, նըպատակ ունենալով ապակայունացնել իրադրությունը:

Ես կցանկանալի ընթերցողի հետ կիսվել անհանգստացնող մի այլ հարցի մասին ևս:

Մեր ժողովուրդը սովետական քանակի զինվորի նըկատմամբ հարգալից վերաբերմունքի, գթասրտության անփոխարինելի ավանդույթներ ունի: Սովետական զինվորը, կամ ինչպես մենք հաճախ ասում ենք՝ ռուս զինվորը, մեր ժողովրդի համար միշտ եղել է փրկության խորհրդանիշ, և մարդիկ արժանին են մատուցել նրանց՝ հանդիպելով փողոցում, տրանս-

պորտում կամ հյուրընկալելով սեփական հարկի տակ: Ծավով պետք է նշել, որ վերջին ամիսների իրադարձություններում ինչ-որ տեղ խախտվել է այդ քարի ավանդույթը, կա մի ներքին նեղացածություն:

Մեր ժողովուրդը միշտ մեծահոգի է գտնվել և հիմա էլ երբ մենք, գուցե ոչ ճոխ և նաև անտրամադիր, հավաքվում ենք տոնական սեղանի շուրջ, պետք է հիշենք, որ դրսում կանգնած է սովետական զինվորը, որը հրաման է կատարում: Այսպես մի օր իրենց պարտքը հայրենիքի հանդեպ կատարել են, կատարում են կամ կկատարեն մեր որդիները, եղբայրները, մենք:

Փոխենք մեր վերաբերմունքը զինվորի նկատմամբ, վերականգնենք մեր ժողովրդի քարի ավանդույթը, նրանց նըկատմամբ լինենք հոգատար ու սրտացավ:

Այս օրերին մենք պետք է ապրենք մեկ նպատակով՝ մեր հինավուրց հայոց հողը քարձրացնենք փլատակներից, այն կրկին դարձնենք երգ ու պարի, խինդ ու ծիծաղի ծաղկուն երկրամաս:

Մենք մեր նպատակին կըհասնենք, եթե ավելի սերտորեն համախմբվենք, գործենք միասնական ճակատով: Այստեղ իրենց վճռական խոսքը պետք է ասեն կուսակցական կազմակերպությունները, քոլոր կոմունիստները: Մենք շատ անելիքներ ունենք կուսակցական կազմակերպությունների մարտունակության, յուրաքանչյուր կոմունիստի անձնական պատասխանատվության քարձրացման ուղղությամբ: Մենք հավատում ենք մեր կոմունիստների քանականությանը և ուժին:

Մենք կհասնենք մեր նպատակին, քանի որ մեզ հետ է ամբողջ սովետական ժողովուրդը: